

Կյանքից կառչած

Bookmark

Charles Aznavour

Retiens la vie

Bookmark 

Շառլ Ազնաւուր

Կյանքից կառչած

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Արտակ Հերիքյանի
ժակլին Մինասյանի



ԵՐԵՎԱՆ
2019

ՀՏԴ 821.133.1-94 Ազնավուր
ԳՄԴ 84(4Ֆր)-4
Ա. 250

Ա. 250 Ազնավուր Շառլ
Կյանքից կառչած/Շառլ Ազնավուր.- Եր.: Newmag, 2019.- 176 էջ:

«Կյանքից կառչած» գիրքը Շառլ Ազնավուրի գրած վերջին՝ իններորդ գիրքն է: Սա թեթև կյանքի մասին չէ, թեև Ազնավուրն ասում է՝ թո՛ղ որ այս փոքրիկ գիրքը մեղմ զեփյուռի պես թեթևություն բերի ձեզ: Այս պատմություններում արտահայտված է նրա տրամադրությունը՝ արտացոլված երջանկությամբ ու պարզ ուրախությամբ: Արձակի խոսքով կերտված և չափածոյով համեմված դեպքերումները նրան կրկին տանում են այն մտերմիկ միջավայրը, որում ձևավորվել է արտիստը:

Սեփական կյանքը պատմելն Ազնավուրի համար հեշտ չէ: Երկընտրանքի առջև շատ է կանգնել՝ պատմել՝ ամբողջը, թե՛ թաքցնել անպատմելին: Սա յուրահատուկ երկխոսություն է իր և ընթերցողի միջև: Արտիստը խոսում է դժբախտության, հաջողության, երջանիկ հանդիպումների մասին: Կյանքը սիրող, կյանքին տրված ու կյանքից կառչած Ազնավուրը վերապրում է իր վաղուց մոռացված սերերն ու հուշերը:

Նախաբանը՝ Ռոգի Արմենի: Գրքին կցված են նաև Արտակ Հերիքյանի տարբեր տարիներին Ազնավուրի հետ արված հարցազրույցները, որոնք լրացնում են մեծ արտիստի կերպարը:

ՀՏԴ 821.133.1-94 Ազնավուր
ԳՄԴ 84(4Ֆր)-4

ISBN 978-9939-9196-5-2

Շառլ Ազնավուր. «Կյանքից կառչած» © newmag, 2019

Գիրքը թարգմանվել է և հրատարակվել է ֆրանսիական Les Editions du Seuil հրատարակչական ընկերության թույլտվությամբ:

Charles Aznavour "Retiens la vie" © Don Quichotte Editions,
une marque des Editions du Seuil, 2017

Շապիկի լուսանկարը՝ Vincent Capman/Paris-ի Match /Getty Images.com
Հեղինակի լուսանկարը՝ Դավիթ Հակոբյանի

Ռոգի Արմենի և Արտակ Հերիքյանի լուսանկարները՝ անձնական արխիվներից
Շառլ Ազնավուրի և Արտակ Հերիքյանի լուսանկարը՝ Վահան Ստեփանյանի

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՄԻ» գրական գործակալության միջոցով:

ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ



DIGITAIN



ARARAT

ԼԵՑԵՆԴԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՑԱԿՆԵՐ
1867



ACBA-CREDIT AGRICOLE

Ինչու է պետք կարդալ այս գիրքը կամ «Դու անմահ ես, Շառլ»

«Փարիզը սիրում եմ մայիսին»¹

Այո, Շառլ, շատ ճիշտ ես ասում. դու և ես Փարիզը սիրում ենք մայիսին, որովհետև դու մայիսի 22-ին ես ծնվել, ես՝ մայիսի 1-ին, երկուսս էլ՝ Փարիզում:

Դու և ես՝ մենք, Ցեղասպանությունից փրկվածների երեխաներ ենք: «Ցեղասպանություն» բառը հաճախ ենք լսել մեր ծնողներից, որոնք մեզ անսահման սեր են փոխանցել մեր պատմական հայրենիքի հանդեպ:

Հիշում եմ՝ մի օր հայրս տուն եկավ փայլող դեմքով: Քո հայրիկին էր հանդիպել Տրևիզ փողոցում, կարծես 9-րդ թաղամասում է այդ փողոցը: Հայրդ ասել էր. «Գիտե՞ս, Խորեն, տղաս՝ Շառլը, երգում է», հայրս էլ, թե՛ «Գիտե՞ս, Միշա՛, աղջիկս՝ Ռոզը, նույնպես սիրում է երգել»: Մեր հայրերն ուրախ

¹ Ազնավուրն այս վերնագրով երգ ունի, որն առաջին անգամ ընդգրկվել է 1956-ին թողարկված «Շառլ Ազնավուրը երգում է Շառլ Ազնավուր» ալբոմում: «Փարիզը սիրում եմ մայիսին» երգը 2014-ին Ազնավուրի հետ կատարել է ֆրանսիացի հայտնի երգչուհի Ջազը: Իրենց դուետն Ազնավուրն անվանում էր ՋԱՋնավուր: Ավելի վաղ տված հարցազրույցում երգիչը խոստովանել էր, որ ցանկանում է զուգերգ ծայնագրել Ջազի հետ:

Էին, որ տարիներ անց Նորից են հանդիպում, հիշում իրենց թիֆլիսյան կյանքը, մասնկությունը, իրենց դպրոցը:

Իհարկե, դու ինձնից շուտ էիր սկսել երգել: 1961-ին, երբ առաջին քայլերն էի անում, դու արդեն հայտնի երգիչ էիր: Մեր ճամփաները հաճախ են խաչվել, բայց երբեք իսկական հանդիպում չենք ունեցել, քանի որ դու, ինչպես և ես, խրված էիր գործերի մեջ՝ հյուրախաղեր, հազար ու մի պարտականություն...

Հիանում եմ քո գրած երգերով, որոնք կյանքի, իրական կյանքի մասին են պատմում: Այնքան խորիմաստ են այդ երգերը՝ հայկական ոգով ու լավ ֆրանսերեն գրված:

Հիշում եմ նաև, որ մի անգամ ընտանիքով եկել էինք Փարիզի Ալիամբրա համերգասրահ քո համերգին: Ինչ մեծ երջանկություն էր բեմի վրա քեզ տեսնելը, երիտասարդ հայի հաղթանակը տեսնելը ֆրանսիական հողի վրա:

Այդ համերգից հետո այլևս կասկած չունեի՝ երգչուհու կարիերա պետք է անես: Ճիշտն ասած, մինչև այդ էլ կանխագույն էի, որ երգն է իմ մասնագիտությունը, բայց հենց այդ օրը վերջնականապես համոզվեցի:

Ամբողջ հայ ժողովուրդը պաշտում է քեզ, դու բարոյական ու նյութական նեցուկ էիր նրա համար: Բռավժո, Շանլ, որ քո հաջողություններով այդքան բարձրացար՝ մոտենալով հրեշտակներին:

Ինչպես Ֆրանսիայի բոլոր Մեծերին, Հանրապետությունը քեզ էլ հարգանքի համազգային տուրք մատուցեց: Հրաժեշտի արարողությանը ես էլ էի ներկա: Շատ հուզիչ պահ էր՝ արցունքն աչքերիս, բայց այնքան հպարտ իմ արմատներով:

Մեծ վիշտ է քեզ կորցնելը: Բայց դու մեզ համար միշտ կմընաս խիզախության ու տոկունության օրինակ: Քեզ սիրում են

ամբողջ աշխարհում, քեզ պաշտում են հայրենակիցներդ:

Դու անմահ ես, Շանլ: Դու կապրես հավերժ, քանի որ մեր սրտերում ընդմիշտ կապրեն քո գեղեցիկ երգերը:

Ռոզի Արմեն¹

¹ Rosy Armen - Ռոզի Արմեն (Ռոզի Հովհաննիսյան, ծնվ. 1939 թ.), ֆրանսահայ երգչուհի: Երգում է հայերեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն և գերմաներեն: 1963-2001 թթ. թողարկել է 12 երաժշտական ալբոմ: 2015-ին Հայաստանի Հանրապետության տոնի առթիվ Ռոզի Արմենին շնորհվել է «Պատվո շքանշան»: Նա երգել է Ժիլբեր Բեկոյի, Շառլ Ազնավուրի, Ջոնի Հոլիդեյի, Խուլիո Իգլեսիասի հետ: 1965 թ. համերգներով հանդես է եկել Մոսկվայում, որտեղ ծանոթացել է Տիգրան Պետրոսյանի, Հովհաննես Բաղդամյանի, Առնո Բաբաջանյանի հետ: 1988-ի Սպիտակի երկրաշարժից հետո մասնակցել է Շառլ Ազնավուրի նախաձեռնած «Քեզ համար, Հայաստան» երգի ձայնագրմանը: 1991-ից պարբերաբար այցելում է Հայաստան:

Բովանդակություն

Գլուխ I	Գրել	15
Գլուխ II	Կարոտի թևով	25
Գլուխ III	Երգել	33
Գլուխ IV	Տարօրինակ ֆրանսիացիները	37
Գլուխ V	Հավատարիմ մնալ ինքդ քեզ	41
Գլուխ VI	Ինչ ենք արել 20 տարեկանում	45
Գլուխ VII	Չեմ ապաքինվել մանկությունից	51
Գլուխ VIII	Բառի ուժանը, գույնը, քաշը, խտությունը, արժեքը և իմաստը	55
Գլուխ IX	Իմ սևագրերը	59
Գլուխ X	Բայց ոնց որ երեկ լիներ	65
Գլուխ XI	Այնտեղ, որտեղից եկա	69
Գլուխ XII	Հաջողություն ունենալ	75
Գլուխ XIII	Լավ օրեր	79

<i>Գլուխ XIV</i>	Իմ խենթ տարիները	85
<i>Գլուխ XV</i>	Իմ ճամփորդությունները	89
<i>Գլուխ XVI</i>	Երբեք չեմ մոռանա	95
<i>Գլուխ XVII</i>	Նախապաշարումների դեմ	99
<i>Գլուխ XVIII</i>	Շարունակել սկսած ճանապարհը...	101
<i>Գլուխ XIX</i>	Իսրայելն ու հրեաները	105
<i>Գլուխ XX</i>	Դեռ երեկ ...	109
	Մտապահիր	113
	Վերջաբան	117
	Զրույցներ Ազնավուրի հետ	123
	Թունդ հայը	125
	Երգեմ, գնամ տուն	135
	Դրախտի կեսճանապարհին	141
	Չհիասթափեցնել հրեուհիներին	147
	Երազանք չունեմ, միայն՝ ծրագրեր	159

Եթե պապս ու փափս, երկուսն էլ՝ հայ,
Սևամորթ լինեին, դեղին կամ հրեա,
Ես էլ նույնը կլինեի,
Երեխաներս նույնպես:
Այնպես որ, լավ կլինի՝ նախ մտածենք,
Հետո միայն մերձավորի մասին դատենք:

I

Գրել

«Ցածր ձայնով», «Մի դռնից մյուսը» և «Որքան որ կրաբախի սիրոյս» ինքնակենսագրական գրքերով¹ ուզում էի եռապատում գրել, ինչպես ինձնից առաջ արել են շատ գրողներ ու պատմաբաններ, որոնցով հիացել եմ... Միայն թե գրիչս սահեց ձեռքիցս, և երեք հատորի սահմանն անցա: Հուսով եմ՝ չեք նեղանա:

Երբեմն, համակարգչի դատարկ էջի առաջնստաժ, սկսում եմ աչքերս բաց երազել և ինքս ինձ ասել՝ ինչ երջանկություն, ինչ ուրախություն է գլխապտույտ հաջողության հասնելը: Հենց առաջին տպագրությունից գիրքդ բեթթեկեր դարձավ. մի քանի ժամում վաճառվեց 200.000 օրինակ: Դրան հետևեց նույն կամ ավելի մեծ տպաքանակով հրատարակությունը՝ սրելով արտասահմանցի բազմաթիվ թարգմանիչների հետաքրքրությունն ու ապահովելով գրքի համաշխարհային հաջողությունը: Ո՛վ չէր երազի, առաջին հերթին՝ ինքս: Գրելու համար բոլորովին էլ պետք չէ հանճարեղ լինել, մի քիչ տա-

¹ Ինքնակենսագրականները լույս են տեսել 2009–2013 թթ., 2009–ին՝ *A voix basse* («Ցածր ձայնով»), 2011–ին՝ *D'une porte l'autre* («Մի դռնից մյուսը») և 2013–ին՝ *Tant que battra mon coeur* («Որքան որ կրաբախի սիրոյս»): (Ծանոթագրությունները՝ **newmag**-ի):